

Լրացուցիչ Ապահովության Եկամտի Վճարումներ



Լրացուցիչ Ապահովության Եկամտը (Supplemental Security Income) Սոցիալական Ապահովության Վարչության ծրագրերից մին է: Լրացուցիչ Ապահովության Եկամտը վճարումներ է տրամադրում այն մարդկանց, որոնք ունեն փոքր եկամուտ (կամ էլ ոչինչ) և ունեն քիչ դրամական միջոցներ, լինելով հաշմանդամ, կույր կամ ծեր: Լրացուցիչ Ապահովության Եկամտը վճարում է հաշմանդամ մեծահասակների և երեխաների: Լրացուցիչ Ապահովության Եկամտ ստանալու համար պետք է լինեք ծեր, կույր կամ հաշմանդամ՝

- Ծեր նշանակում է որ դուք 65 տարեկան եք կամ ավելք:
- Կույր նշանակում է որ դուք ամբողջովին կույր եք կամ ունեք շատ տկար տեսողություն:
- Հաշմանդամ նշանակում է որ դուք ունեք մարմնական կամ մտային անհանգստություն, որը կտեղի մեկ տարի կամ կավարտվի մահով: Ձեր տեղական Սոցիալական Ապահովության գրասենյակը կարող է ձեզ լրացուցիչ տեղեկություն տալ չափահասների և երեխաների վերաբերող հաշմանդամության կանոնների մասին:

Երբ Լրացուցիչ Ապահովության Եկամտ ստանաք, դուք նաև կը ստանաք պարենային կտրոններ և Մէտիքէյտ: Մէտիքէյտը կօժանդակի վճարելու բժիշկի և հիվանդանոցի ծախսերը:

Ձեր ունեցած ինչքերը և եկամտը

Լրացուցիչ Ապահովության Եկամտ ստանալու համար, ձեր ինչքերը և եկամտը պետք է լինեն որոշ գումարից ցածր:

Ձեր դրամական միջոցները

Երբ որոշում ենք ձեր իրավասությունը Լրացուցիչ Ապահովության Եկամտի, մենք ամեն ինչքերը հաշվի չենք առնում: Օրինակ, մենք հաշվի չենք առնում ձեր տունը որի մեջ ապրում եք, ինչպես նաև ձեր անձնական սեփականությունները: Սովորաբար հաշվի չենք առնում ձեր ինքնաշարժը: Մենք հաշվի առնում ենք հետևյալը.

- Կանխիկ դրամ.
- Գրամատան հաշիվներ, բաժնետոմսեր և պարտատոմսեր.
- Անշարժ կալված.
- Կյանքի ապահովագրություն. և
- Անձնական կալված:

Դուք կարող եք Լրացուցիչ Ապահովության Եկամտ ստանալ, եթե ձեր դրամական միջոցները, որ մենք հաշվի առնում ենք, չեն գերազանցում՝

- 2,000 դոլար մեկ անձի համար. և
- 3,000 դոլար մեկ զույգի համար:

Ձեր Եկամտը

Եկամտը այն փողն է որ ստանում եք. օրինակ՝

- Հասույթ (աշխատավարձ կամ ինքնաշխատությունից առաջացած զուտ հասույթ).
- Սոցիալական Ապահովության նպաստներ.
- Կենսաթոշակներ.
- Բանվորական փոխհատուցման վճարումներ.
- Տոկոսավճար, շահաբաժին, վարձատրություն, շահումներ.
- Անգործության փոխհատուցում. և
- Նվերներ (օրինակ՝ կանխիկ դրամ):

Եկամտը ընդգրկում է նաև ոչ դրամական օգնություն, օրինակ՝ ուտելիք, հագուստեղեն և անվճար ապաստարան: Կարող եք եկամտ ունենալ և տակալին ստանալ Լրացուցիչ Ապահովության Եկամտ:

Այլ Կանոններ, Որոնք Դուք Պետք է Իմանաք

Լրացուցիչ Ապահովության Եկամտ ստանալու համար, դուք պետք է ապրեք Միացեալ Նահանգներում կամ Հիւսիսային Մարիանայի Կղզիներում, և պատկանեք հետեւյալ խմբերից մեկուն՝

- Լինեք Ամերիկայի Միացեալ Նահանգների քաղաքացի կամ հպատակ. կամ
- Լինեք իրավասու օտար քաղաքացի:

Օտար քաղաքացիների համար Լրացուցիչ Ապահովության Եկամտի մասին լրացուցիչ տեղեկություն ստանալու համար դիմեք Սոցիալական Ապահովության տեղական գրասենյակին: Խնդրեցեք Supplemental Security Income (SSI) for Noncitizens «Լրացուցիչ Ապահովության Եկամտ (SSI) Օտար Քաղաքացիների Համար» հրատարակության օրինակը, (հրատարակություն՝ թիւ 05-11051-AM).

Ինչպե՞ս կարող եք դիմել Լրացուցիչ Ապահովության Եկամտի

Չանգահարեք մեզ՝ **3/ 22/994/3435** հեռախոսահամարով ժամադրվելու ձեր տեղական գրասենյակում գտնվող ներկայացուցչի հետ, օգնություն ստանալու ձեր դիմումնագրի հարցերով:

(2րջել)

Ծնողներ կամ խնամակալներ կարող են դիմել 18 տարեկանից ցածր տարիքի կույր կամ հաշմանդամ երեխաների համար:

Տեղեկություն Արցախյան Ապահովության նպաստների մասին

Ինչ Բերել

Նախքան դիմում ընելը պետք է ունենաք հետևյալ փաստաթղթերը՝

- Ձեր Արցախյան Ապահովության քարտը կամ ձեր Արցախյան Ապահովության համարը.
- Ձեր ծննդյան վկայականը կամ ձեր տարիքը հաստատող այլ փաստաթուղթ.
- Տեղեկություն ձեր բնակած տան մասին, ինչպիսին է՝ ձեր գրավագիրը (mortgage) կամ վարձքի պայմանագիրը (lease) եւ տանտիրոջ անունն ու ազգանունը.
- Հարկային հայտարարգիրը (tax return) կամ W-2 թղթիկը, վճարացուցակի կտրոնները (payroll slips), դրամատան հաշվեցուցակ կամ գրքույքները (bank books), ապահովագրերը (insurance policies), ինքնաշարժի արձանագրությունը (car registration), բաղման հիմնադրամի տեղեկությունը (burial fund records), ինչպես նաեւ այլ տեղեկություններ ձեր եկամտի եւ ինչքերի մասին:
- Եթե դիմում եք հաշմանդամության նպաստների՝ ձեր բժիշկների, հիվանդանոցների եւ դարմանատուների անունները, հասցեները եւ հեռախոսահամարները.
- Ամերիկայի Միացեալ Նահանգների քաղաքացիության կամ օտար քաղաքացու իրավասու կարգավիճակի ապացույցը:

Եթե նոյնիսկ ցուցակում նշված բոլոր փաստաթղթերը չունենք, այնպայման դիմումը ներկայացրեք: Արցախյան Ապահովության գրասենյակի պաշտոնյան կարող է ձեզ օգնել պահանջվող փաստաթղթերը ապահովելու:

Պետք է բերեք նաեւ ձեր փոխ գիրի գրքույկը կամ այլ փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս ձեր դրամատան, վարկային միության կամ այլ դրամական հաստատության հաշվի համարը, որպեսզի մենք կարողանանք ձեր վճարումները ուղղակիորեն ուղարկենք ձեր հաշվի մեջ: Ձեր նպաստները ուղղակի դրամատուն ուղարկելով, դուք պաշտպանում եք այն վճարումները կորուստից, գողությունից եւ փոստային ուշացումից: Փողը միշտ ժամանակին տեղ է հասնում եւ պատրաստ օգտագործման՝ առանց դրամատուն գնալու անհրաժեշտության: Թղթային փոխ գիրեր ստանում են միայն այն անձիք որոնք դրամատան մեջ հաշիվ չունեն:

Արցախյան Ապահովությունը վճարում է նաեւ ծերության, վերապրողների եւ հաշմանդամության նպաստներ այն անհատների, որոնք ունեն բավականաչափ աշխատանք Արցախյան Ապահովության օրենքների համեմատ: Այս նպաստների մասին լրացուցիչ տեղեկություն ստանալու համար խնդրեցե՛ք Retirement and Survivor Benefits «*Ծերության Կենսաթոշակ եւ Վերապրողների Նպաստներ*» (հրատարակություն՝ թիւ 05-10700-AM) կամ Disability Benefits «*Հաշմանդամության Նպաստներ*» (հրատարակություն՝ թիւ 05-10701-AM) հրատարակությունները:

Արցախյան Ապահովության հետ կապ հաստատել

Հաշվառող տեղեկության համար, այցելեցե՛ք մեր կայքէջը, www.socialsecurity.gov ուր նաեւ կարող եք գտնել մեր վեբջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետևյալ անվճար թվին 1-800-772-1213 (խուլերը եւ դժուար լսողները թող զանգահարեն հետևյալ հատուկ TTY թվին 1-800-325-0778): Ինքնաշխատ հեռաձայնային ծառայությամբ, մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել օրը 24 ժամ:

Եթե թարգմանիչ Պետք Ունեք. Մենք ձեզ համար անվճար թարգմանիչ կարող ենք տրամադրել որպեսզի դուք կարողանաք մեզ հետ ձեր գործերը կատարել: Այս թարգմանչական ծառայությունը կարող եք գտնել մեր գրասենյակներում եւ հեռաձայնի վրայ: Չանգահարեցե՛ք մեզ հետևյալ թվին 1-800-772-1213 եւ ճնշե՛ք թիւ մեկը: Հեռաձայնը պատասխանող ներկայացուցիչը միացնում է ձեզ թարգմանիչի հետ որպեսզի ան օգնե՛ք ձեզ: Եթե չ'կարողացանք հեռաձայնով օգտակար լինել, ժամադրություն ենք տալիս որպեսզի դուք այցելե՛ք ձեր տեղական գրասենյակը որտեղ ներկայ կը լինի նաեւ թարգմանիչը:

Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Ուզում ենք նաեւ վստահ լինել, թե դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Արցախյան Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները: